# Լորդերի պալատի փոխխոսնակ բարոնուհի Քերոլայն Քոկսը ժամանեց Արցախ

Մի քանի օր առաջ Ստեփանակերտ էին ժամանել բարոնուհի Քերոլայն Քոկսը եւ նրան ուղեկցող 17 հոգի: Նրանք հանդիպումներ են ունեցել Ստեփանակերտի բնակչության, ադրբեջանական բանտերից մի կերպ ազատվածների, Բերդաձորից, Հադրութի շրջանից փախածների հետ: Հուլիսի 14-ի երեկոյան ժամը 20:30-ին ամբողջ խմբին տեղափոխել են Բաքու, իբր նրանց անվտանգությունն ապահովելու համար: Պատվիրակության այն պահանջը, թե ցանկանում են Ստեփանակերտում շարունակել իրենց աշխատանքները, այցելել Շահումյանի շրջան, չի բավարարվել: Նրանց հայտնել են, որ եթե ցանկանում են գնալ Ստեփանակերտ, թող Երեւանից ինքնաթիռ գա Բաքու՝ իրենց Երեւան տեղափոխելու, իսկ Երեւանից արդեն կարող են նորից մեկնել Ստեփանակերտ:

Հուլիսի 15-ին բարոնուհի Քոկսը իր խմբի հետ հատուկ ինքնաթիռով Բաքվից ժամանել էր Երեւան եւ երեկ, հուլիսի 16-ին, կրկին մեկնեց Լեռնային Ղարաբաղ, Բերդաձոր, որտեղից, ըստ լուրերի, նա մեկնել է Մոսկվա, ուր պատրաստվում է այսօր կամ վաղը մամլո ասուլիս տալ: ■